Ծառայությունների մատուցման պայմաններ

Արժեքը

Փորձնական դասի արժեքը կազմում է 4950 ՀՀ դրամ

Անդամավճարի չափը կազմում է 2250 ՀՀ դրամ

Անդամավճարը թույլ է տալիս Պատվիրատուին օգտվել հավատարմության ծրագրերից և աբոնեմենտային զեղչերից, մասնակցել սեզոնային ակցիաներին, սովորողների համար Կատարողի կողմից կազմակերպվող անվճար միջոցառումներին:

Կատարողի կողմից մատուցվող կրթական ծառայությունների բազային արժեքը կազմում է 12000 ՀՀ դրամ օտարերկրյա ուսուցչի հետ անհատական պարապմունքների 1 ակադեմիական ժամի համար:

4-ից ավելի ակադեմիական ժամի համար վճարելու դեպքում գործում է զեղչերի ճկուն համակարգ:

Ավելի քան 8 ակադեմիական ժամի համար ուսման վարձը վճարելու դեպքում հնարավորություն է տրվում անվճար հաճախել ակումբային պարապմունքների:

1 ակադեմիական ժամը կազմում է 40 րոպե:

Ծառայությունների վճարում

Կատարողը կրթական ծառայություններ է մատուցում նախավճարի պայմաններով:

1 ակադեմիական ժամի գինը, ուսման վարձը, վճարման կարգը և ժամկետները նշված են Կատարողի կողմից կրթական ծառայությունների հաշիվներում:

Ուսման վարձի վճարումը կատարվում է մինչև ծառայությունների մատուցումը սկսելու օրը՝ առնվազն 1 (մեկ) ուսման վարձի չափով, Դպրոցի հաշվեհամարին անկանխիկ եղանակով:

Ծառայությունների դիմաց վճարման Պատվիրատուի պարտականությունները համարվում են կատարված Կատարողի հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման պահից:

Վերադարձ

Պատվիրատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս Կատարողը Պատվիրատուին է վերադարձնում կրթական ծառայությունների համար վճարված դրամական միջոցները՝ հանած մատուցված կրթական ծառայությունների արժեքը և պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ կապված փաստացի կատարված ծախսերը: Եթե վճարումը կատարվել է զեղչով, ապա Կատարողը վերահաշվարկ է կատարում ծառայության նշված մասով (անհատական դասերի քանակը)՝ ըստ ակադեմիական ժամի

բազային արժեքի: Վերահաշվարկից հետո դրամական միջոցների մնացորդը վերադարձվում է Պատվիրատուին:

Ուսման չօգտագործված ժամերի համար վճարումը, որը բաց է թողնվել սովորողի կողմից որևէ պատճառով, չի վերադարձվում:

Չեղարկում

Սովորողը կարող է մեկ ամսվա ընթացքում հետաձգել 2 առանձին պարապմունք (տեխնիկական կամ այլ պատճառներով): Այդ դեպքում նա պարտավոր է գրավոր կերպով ծանուցել Կատարողին: Սովորողն իրավունք ունի չեղյալ հայտարարել վճարովի անհատական դասընթացը դասի մեկնարկից առնվազն 2 ժամ առաջ: Դասի մեկնարկից 2 ժամից պակաս չեղարկման դեպքում տեղի է ունենում դասի ամբողջական դուրսգրում, գումարը չի վերադարձվում:

Վճարման կանոնները

Վճարումների անվտանգությունն ապահովվում է 256-բիթ ծածկագրմամբ SSL արձանագրության օգտագործմամբ՝ գաղտնի տեղեկատվությունը վճարային էջից ձեռք բերող բանկի պրոցեսինգային կենտրոնի սերվերին փոխանցելու համար՝ «ArCa» ազգային վճարային համակարգի և Visa International և MasterCard International միջազգային վճարային համակարգերի պահանջներին համապատասխան: